

Զ Ե Կ Ո Յ Յ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՈՒՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

1965-66 Տարեշրջանի Համալսարանական Կրթաթոշակներ

1.— Գաղուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը 1965-66 ուսումնական տարեշրջանին համար եւս որով թիւով կրթաթոշակներ պիտի յատկացնէ արժանաւոր հայ ուսանողներու:

2.— Կրթաթոշակներու յատկացումը պիտի կատարուի ընտրութեամբ, հայկական ծաղում ունեցող ուսանողներու՝ որոնք իրենց ընկալալարին և կամ այլ երկրի մը կրթական հաստատութիւններէն մէկուն մէջ բարձրագոյն ուսման հետեւելու համար զօրկ են նիւթական անհրաժեշտ միջոցներէն: Սկզբունքով Հիմնարկութիւնը չի փափաքիր հովանաւորել ուսանողներ՝ որոնք իրենց բարձրագոյն ուսման կ'ուզեն հետեւիլ հեռաւոր երկրներու համալսարաններուն մէջ: Շատ բացառիկ պարագաներու տակ է միայն որ կրթաթոշակներ կըրնան յատկացուիլ այս վերջիններուն՝ եթէ նախընտրուած մասնագիտութեան կարելի չէ հետեւիլ տեղական համալսարաններու մէջ:

3.— Թեկնածուները պարտին լրացնել համալսարանի մուտքի անհրաժեշտ բոլոր պայմանները և ընդունուած ըլլալ նուազագոյն Վոֆթօմբը դասաբանը կամ յաղողութեամբ անցուցած՝ Բ. կարգի Պէագոլորիայի քննութիւնները:

4.— Ընտրութիւնները պիտի կատարուին ա'յն թեկնածուներէն միայն՝ որոնք կը դասուին իրենց դասաբանի յաղողագոյն 20 օրն մէջ և որոնք ընդհանուր միջինը նուազագոյնը 80 օր է: Ընտրական Յանձնախումբը տեսցմէ կ'ընտրէ իր դասաթուութեամբ արժանաւորագոյն նկատուած թեկնածուները միայն:

5.— Թեկնածուները իրենց ձեռագիր դիմումագիրը պէտք է ներկայացուցած ըլլան ստորեւ նշանակուած հասցէներէն մէկուն — պարագային համաձայն — ամենէն ուշ մինչև 31 Մայիս, 1965: Ի պատահած՝ թեկնածուներուն կը զրկուին հարցաթերթիկներ՝ որոնք ճշդ-զրոտօրէն լեցուելէ ետք, պահանջուած փաստաթուղթերուն հետ պէտք է վերադարձուին Հիմնարկութեան ներկայացուցիչ մարմիններուն և կամ Լիզպոնի Կեդրոնին, ամենէն ուշ մինչև 31 Յուլիս, 1965: (Հարաւային Ամերիկայի երկրներուն ինչպէս նաեւ Աւստրալիոյ համար այս թուականները պիտի ըլլան յալորդարար 15 Դեկտ. 1965 և 15 Փետր. 1966:)

6.— Հիմնարկութիւնը սահմանափակ թիւով կրթաթոշակներու համար նկատի պիտի ունենայ նաեւ դիմումներ թեկնածուներէ՝ որոնք արդէն տիրացած են համալսարանական վկայականի մը և կը փափաքին կատարելագործել իրենց ուսումը ընկած երկրին կամ արտասահմանի կրթական բարձրագոյն հաստատութիւններէն մէկուն մէջ: Նախընտրութիւն պիտի արուի արժանաւորագոյն թեկնածուներէն անոնք՝ որոնք նախապէս օգտուած չեն քնաւ Հիմնարկութեան կրթաթոշակներէն: Դիմումները պէտք է կատարուին վերոյիշեալ ձեռով դարձեալ և նկատի պէտք է առնուին նոյն պայմանաւորումները:

7.— Ներկայացուած դիմումները ի վերջոյ պիտի կեդրոնացուին Լիզպոն՝ ուր Հիմնարկութեան Ընտրական Յանձնախումբը իր վերջնական որոշումները պիտի տայ Օգոստոս — Սեպտեմբեր ամիսներու ընթացքին: (Հարաւային Ամերիկայի երկրներուն և Աւստրալիոյ պարագային՝ Մարտի սկիզբը:)

8.— Դիմումները պէտք է ուղարկուին հետեւեալ հասցէներուն:

Ա.— Լիբանանի քնակող քեկնածուներու համար,
Educational Committee of the Calouste Gulbenkian Foundation in the Lebanon,
Stephan Building, Riad Solh Street, Beirut, Lebanon.

Բ.— Սուրիա քնակող քեկնածուներու համար,
Mr. K. Nersoyan, P. O. Box 757, Aleppo, Syria.

Գ.— Թուրքիա քնակող քեկնածուներու համար,
Scholarships Committee of the Calouste Gulbenkian Foundation,
c/o Mr. J. J. Ahravanel, Portuguese Consul, Beyoglu, Istanbul, Turkey.

Դ.— Ֆրանսա քնակող քեկնածուներու համար,
Comité des Boursiers Arméniens de la Fondation Calouste Gulbenkian,
51, Avenue d'Iéna, Paris XVIème, France.